ՄՈՆԹԵ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԵՊՀ Պատմության ֆակուլտետ,
Հայ արվեստի պատմության և
տեսության ամբիոն

ԱՌԱՆՁԻՆ ՏԱՃԱՐԻԿ-ՄՈԴԵԼՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԱՍԱՆՑ ՊԱՀԱՐԱՆՆԵՐ

Բանալի բառեր՝ *Միջնադար, հայ արվեստ, տաճարիկ, մասանց պահարան, եկեղեցի, սյուն:*

Միջնադարյան հայ արվեստում տաճարիկ-մոդելները մեծ տարածում են ունեցել: Դրանց հանդիպում ենք եկեղեցիների արտաքին հարդարանքի մաս կազմող կտիտորական քանդակներում (Սանահին, Հաղբատ, Դադիվանք, Գանձասար, Աղթամար, Անի)[1], մանրանկարչության մեջ (Էջմիածնի 989 թ. Ավետարան, Սեբաստիայի 1056 թ. Ավետարան, Հաղբատի 1211 թ, Ավետարան)[2], առանձին կոթողներում: Տաճարիկը քրիստոնեական արվեստում խորհրդանշել է Քրիստոսի գերեզմանի վրա կառուցված Երուսաղեմի տաճարը[3], սակայն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եկեղեցիների արտաքին հարդարանքում, առանձին կանգնեցված սյուներում և մանրանկարներում տաճարիկների նշանակությունը որոշակիորեն տարբերվում է:

---

1 Կտիտորական քանդակների մասին տե՛ս **Վ. Հարությունյան**, *Հայկական ճարտարապետության պատմություն*, Երևան, 1992, էջ 247-248, **Բ. Առաքելյան**, *Հայկական պատկերաքանդակները 4-7-րդ դդ.-ում*, Երևան, 1949, էջ 106-107, **Կ. Հովհաննիսյան**, *Սանահին-Հաղբատ*, Երևան, 1975, էջ 7, **Կ. Ղաֆադարյան,** *Հաղբատ*, Երևան, 1963, էջ 15-16, **Կ. Մաթևոսյան**, *Աղթամար,* Էջմիածին 2013, էջ 54-55, **Ստ. Մնացականյան**, *Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը 9-14-րդ դարերում*, Երևան, 1976, էջ 111, **Բ. Ուլուբաբյան**, *Գանձասար*, Երևան, 1981, էջ 45-46, **Ա. Յակոբսոն,** *Գանձասար*, Երևան, 1987, էջ 8 և այլն:

2 Մանրանկարչության մեջ տաճարիկների մասին տե՛ս **Ռ. Դրամբյան**, *Հայկական մանրանկարչություն*, Երևան, 1967, էջ 204, **Հ Հակոբյան**, *Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը 13-14-րդ դդ.*, Երևան, 1989, էջ 89, **Ա. Աղասյան, Հ. Հակոբյան, Մ. Հասարաթյան**, **Վ. Ղազարյան**, *Հայ արվեստի պատմություն*, Երևան, 2009, էջ 139 և այլն:

3 Քրիստոսի գերեզմանի վրա կառուցված Երուսաղեմի տաճարի մասին տե՛ս **А. Кешман**, *"Эмблема сакрального пространства: представление Иерусалима в форме храма Гроба Господня", с 256-276,* **А. Пентовский**, "'Иерусалимизация' литургического пространства в византийской традиции", сс. 58-59, 68-69, 60-62, *Новые Иерусалимы. Иеротопия и иконография сакральных пространств. Сборник статей, под. ред.* ***А. М. Лидова,*** Москва, 2009, **Engelbert Kirschbaum,** *Lexikon Der Christlichen Ikonographie*, Freiburg, 1994, Bd 1, S 239-241, Bd 4, S. 255-266. և այլն:

Եկեղեցիների արտաքին հարդարանքում առկա տաճարիկները հանդիսացել են տվյալ եկեղեցու մանրակերտը՝ Հաղբատ (նկ. 1), Սանահին (նկ. 2), Աղթամար (նկ. 3), Դադիվանք, Հաղարծին և այլն: Սովորաբար կտիտորների քանդակները տեղադրել են եկեղեցու արևմտյան կամ արևելյան ճակատներին: Կտիտորները իրենց ձեռքում են պահել տաճարի մոդելը: Կտիտորներին տաճարի մոդելների հետ պատկերելը IV-V դարերի երևույթ է, ինչպես նշում է Բաբկեն Առաքելյանը[4]:

Ինչ վերաբերում է մանրանկարչությանը, ապա այստեղ տաճարիկների պատկերումը խորհրդանշում է Երուսաղեմի տաճարը: Մանրանկարչության մեջ տաճարիկները պատկերվել են և՛ առանձին էջով մեկ, և՛ տերունական շարքի սյուժետային պատկերներում, և՛ լուսանցքներում: Տաճարիկն ունենում է տեմպիետտոյի կամ հենց Հարության Տաճարի տեսքը՝ կլոր տաճարի ձևով: Երբեմն էլ այն վերարտադրում է Տիրոջ Գերեզմանի վրա կառուցված տաճարական համալիրի բազիլիկալ հատվածները: Տաճարը ներկայացված է այնպես, ինչպես մեկնաբանել է Եվսեբիոս Կեսարացին: Սա այն Հին Կտակարանի՝ Սողոմոն արքայի կանգնեցրած և ապա ավերված հնագույն տաճարը չէ, այլ եկել է նրան փոխարինելու՝ գտնվելով Երուսաղեմի հակառակ կողմում: Կարելի է ասել՝ այստեղ տեղի է ունեցել սրբության և սրբատեղիի խորհրդանշական փոխադրում[5]:

Հայկական մանրանկարչական արվեստում տեմպիետտոյի պատկերման վաղագույն օրինակի հանդիպում ենք էջմիածնի 989 թվականի՝ ՄՄ 2374 Ավետարանում: Այն ներկայացնում է Քրիստոսի գերեզմանի վրա կառուցված փոքր կլոր տաճարիկ, որի սյուներն ընդմիջվում են վարագույրներով (նկ. 4):

Վաղագույն օրինակներից մեկը, որի լուսանցքում տաճարիկ է պատկերված, կրկին էջմիածնի Ավետարանն է: Նկարիչը մեկնաբանել է այն որպես հովանոց, ծածկոց: Այստեղ ներկայացված է մատուռ, որը համապատասխանում է Կանայք Տիրոջ Գերեզմանի մոտ և Հարության բնագրերին[6]:

XI դարի օրինակ է 1057 թվականի՝ ՄՄ 3784 Ավետարանը, որտեղ պատկերված է արդեն ոչ թե մատուռ, այլ հենց Տիրոջ գերեզմանի վրա կառուցված Տաճարը՝ խաչաձև, ծածկված սալիկներով, բարձր թմբուկով՝ վրան խաչ, պատուհաններով, գլխավոր նավով: Երևում է կապը բյուզանդական տաճարների հետ: Տեղի է ունենում ձևի փոփոխություն՝ շրջանաձևից խաչաձևի, բազիլիկալ տարրերով[7]:

---

4 **Բ. Առաքելյան**, *Հայկական պատկերաքանդակները IV-VII դդ.-ում*, Երևան, 1949, էջ 71:

5 **С. Манукян**, “Образ Иерусалимского Храма на полях армянских рукописных Евангелий”, *Лазаревские чтения*, Москва, 2012, с. 89.

6 Նույն տեղում, էջ 89:

7 Նույն տեղում, էջ 91:

Խնդրահարույց է Ասատուր Մնացականյանի տեսակետը, ըստ որի՝ մանրանկարչության մեջ հանդիպող մատուռների, տաճարների և ծիսական այլ կառույցների ու առարկաների պատկերները ցույց են տալիս, թե ինչպես այնտեղ, ուր հետագայում երևան է եկել քրիստոնեության խորհրդանիշ խաչը, նախապես գտնվել է վարսանդապտղային գաղափարանշանը: Որպես օրինակ, նա ներկայացնում է ՄՄ 3708 ձեռագրի 246բ էջում նկարված մի մատուռ, որն իր կարծիքով՝ բոլոր գլխավոր մասերով մատնում է բուսական բովանդակությունը: Ասատուր Մնացականյանի մեկնաբանությունը հետևյալն է. նրա հիմքում նկարված է ցորենի կամ գարու երկու զույգ հատիկ, որոնց վերին ծայրերի միացումներից ծլել է երկու տերև: Այդ տերևների վրա դրված են մատուռի խարիսխները, իսկ նրանց վրա էլ՝ բուսական ծագում ունեցող զույգ սյուները՝ տերևաձև խոյակներով, և ի վերջո՝ գմբեթը, որը ոչ այլ ինչ է, քան ոճավորված կենաց ծառ՝ վարսանդապտղային խորհրդանշով[8]: Մենք համաձայն չենք այս բացատրությանը, որովհետև մեր կարծիքով, մանրանկարներում պատկերվող եկեղեցիները խորհրդանշում են Երուսաղեմի տաճարը: Տաճարիկներ կան առանձին կանգնեցված սյուներում՝ Օձուն, Սանահին, Հաղբատ[9]:

Մեր ուսումնասիրության առարկան առանձին կանգնեցված սյուների վերին հատվածը զարդարող տաճարիկներն են: Ճարտարապետության մեջ տաճարիկները պետք է դիտարկել ոչ միայն որպես զարդատարր, մանրակերտ, այլ նաև խորհրդանիշ՝ Երուսաղեմի տաճարի: Ինչպես հայտնի է, միջնադարում արվեստը, մասնավորապես եկեղեցական ճարտարապետությունը, մանրանկարչությունը, քանդակագործությունը մեկնաբանվել են քրիստոնեական խորհրդաբանության տեսանկյունից: Պատահական չէ, որ Ավետարաններում առկա են Նոր եկեղեցու կամ տաճարի հիշատակություններ[10]: Ըստ Սուրեն Մնացականյանի՝ վաղ միջնադարյան կոթողներն իրենց վերին մասերում ունեցել են խոյակներ հիշեցնող լայնացումներ կամ իսկական ոչ մեծ խոյակներ: Այս տարրերն իրենց մշակման ձևերով միանգամայն ինքնուրույն են, և առանձին դեպքերում նրանց ծածկող զարդային տարրերը պատկերում են կամարակապ ծածկութան-

---

8 **Ա. Մնացականյան**, *Հայկական զարդարվեստ*, Երևան, 1955, էջ 52, 53:

9 Առանձին կանգնեցված այս սյուների մասին տե՛ս **Ս. Մնացականյան**, *Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները*, Երևան, 1982, էջ 26, **О. Халпахчьян**, *Санаин*, М. 1973, с. 26, **Գ. Յովսէփեան**, *Նիւթեր և ուսումնասիրութիւններ հայ արուեստի և մշակոյթի պատմութեան*, [պրակ Գ.], Նիւ Եորք, 1944, էջ 56-57, **Լ. Ազարյան**, *Վաղ միջնադարյան հայկական քանդակը*, Երևան, 1975, էջ 92-113 և այլն:

10 **Մատթ.** ԺԶ. 13-20, **Յովհ.** Բ. 12-16:

ման կառույցներ (Օձուն)։ Որոշ կոթողներ (Փարպի) ավարտվում են չորս հենարանի վրա բարձրացող, միջանցիկ ծածկութանման տարրերով[11]*։ Վաղ միջնադարում տարածված էր մասունքները բարձր տեղերում, կոթողների վերին մասերում, հուշասյուների վրա դրված թևավոր խաչերի ներսում պահելու սովորությունը*[12]*։ Տաճարիկների՝ որպես մասանց պահարան հանդես գալը տեսնում ենք Օձունի հուշասյան օրինակում*[13]*։ Ստեփան Մնացականյանն այս գործառույթը նույնացնում է Զվարթնոցի տաճարում եղած սյան հետ, որտեղ պահվել են ս. Գրիգորի մասունքները*[14]*։ Այս երևույթը հայտնի է եղել ավելի վաղ, և դեռևս Հին Հռոմում քրիստոնեական ծիսական երթն ավարտվել է հրապարակներից մեկում կանգնեցված սյան մոտ, որտեղ Կենարար Խաչի մասունքներն են ամփոփված*[15]*։*

Մովսես Կաղանկատվացին հիշատակում է, որ Աղվանքում քրիստոնեության տարածման ժամանակ հեթանոսական սրբավայրի ծառերից պատրաստված խաչի մեջ դրվեցին սրբերի մասունքներ[16]*։ Օձունի հուշասյան դեպքում տաճարիկը պետք է դիտարկել ոչ միայն որպես մասանց պահարան, այլև Երկնային Երուսաղեմի խորհրդանիշ։ Եթե այստեղ մասանց պահարանի գոյության մասին վկայում են եղած խորշերը և գիտական նյութի ուսումնասիրությունը, ապա շատ կարևոր հանգամանք է նաև այն փաստը, որ մասանց պահարանի մասին կարող են վկայել սյուներին ամրացված մետաղյա փոքրիկ դռնակներից մնացած որոշակի հետքերը։ Այս կապակցությամբ հետաքրքրական են Սանահնի և Հաղբատի եկեղեցիների ներսում գտնվող քարե սյուները, նրանց վրա տեղավորված եկեղեցիների սխեմատիկ մոդելներով հանդերձ։ Հ. Խալփախչյանն անդրադառնում է այդ տաճարիկներին, նշելով, որ Սանահնի Ս. Աստվածածին եկեղեցու ներսում, հյուսիսարևելյան ավանդատան մոտ կարելի է տեսնել մոտ*

---

[11] **Ս. Մնացականյան**,նշվ. աշխ., էջ 26:

[12] Նույն տեղում, էջ 74:

[13] Օձունի կոթողը գտնվում է Գուգարքի շրջանում, կանգնեցված է համանուն տաճարի հյուսիսարևելյան մասում և, ինչպես ինքը տաճարը, թվագրվում է VI դարի կեսով: Հուշարձանը բաղկացած է երկու կոթողներից, որոնց բարձրությունը 2.90 մ է, իսկ պատվանդանի հետ միասին ՝ 4 մ: Օձունի հուշասյան մասին կարող եք կարդալ ինչպես **Լ. Ազարյան**, «Օձունի և Բդաձորի կոթողները», *ՊԲՀ* № 4, 1965, էջ 212-220, **Լ. Ազարյան**, *Վաղ միջնադարյան հայկական քանդակը*, Երևան, 1975, էջ 92-113 և այլուր:

[14] **С. Мнацаканян**, *Звартноц*, Москва, 1971, с. 29.

[15] **Զ. Հակոբյան**, «Հայկական վաղմիջնադարյան քառանիստ կոթողների ծագումնաբանության խնդրի շուրջ», *Հայաստանը և արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը. Բ, Միջազգային գիտաժողովի նյութեր*, Երևան, 2017, էջ 130:

[16] **Ս. Մնացականյան,** *նշվ. աշխ.*, էջ 143:

երկու մետր բարձրություն ունեցող բազալտե մի սյուն՝ նրա վրա դրված եկեղեցու մոդել (նկ. 5)[17]: Այստեղ առավել ուշագրավը սյան վրա դրված այդ մոդելի առջևի մասում արված բավական մեծ կամարակապ բացվածքը և նրա հետևում տեղավորված խոր խորշն է: Համանման սյուն, մոդելով հանդերձ, առկա է նաև Հաղբատի Ս. Նշան եկեղեցում, ընդ որում՝ այստեղ արդեն պահպանվել են խորշի բացվածքը փակող մետաղյա դռնակի ամրացման համար արված անցքերը: Կասկած չի մնում, որ այս մոդելների մեջ պահպանվել են մասունքներ, որոնց շուրջը խմբված՝ ժողովուրդն աղոթել է: Կարելի է եզրակացնե,լ որ Սանահնի կտիտորական հորինվածքի դեպքում նույնպես, մոդելի խորշում, ժամանակին մասունքներ են պահել, և այն ևս փակված է եղել համապատասխան դռնակով[18]:

Այս առիթով, երբ վերհիշում ենք Թովմա Արծրունու խոսքերը Աղթամարի մոդելի մասին՝ «...իբրեւ զսափորն ոսկի լի մանանայիւն, և իբրեւ զտուփ մի ոսկի անուշահոտութեամբ լցեալ»[19], պարզ է դառնում, որ բացառված չէր մոդելների ներսում, գուցե և թանկագին տուփերում, մասունքներ պահելը: Եվ այն հանգամանքը, որ Աղթամարում հափշտակողները կոտրել են հատկապես մոդելը, այնտեղ ինչ-որ թանկարժեք իրեր գտնելու նպատակով, պատահական չէր, և մոդելների մեջ թանկագին մասունքներ տեղավորելու սովորությունը, անշուշտ, լավ հայտնի էր ժամանակակիցներին: Առանձին տաճար-մոդելների օրինակներ են պահվում Հայաստանի պատմության թանգարանում, բայց դրանց վերաբերող տեղեկությունները սակավ են: Հայաստանի պատմության թանգարանում գտնվող երեք օրինակից երկուսը Սյունիքից են հայտնաբերվել (նկ. 6, 7) և թվագրվում են XI-XIII դարերով: Եկեղեցիների մանրակերտները քարե սյուների վրա են դրված, և դրանց վրա զարդատարրեր չկան: Հավանաբար ծառայել են որպես մասանց պահարան: Ինչպես վերը նշել ենք, մասնատուփերը սովորաբար դրվել են եկեղեցու ներսում:

Ասատուր Մնացականյանի պնդմամբ, տաճարիկ-մոդելներ ունեցող սյուների հիմքում կրկին կենաց ծառի գաղափարն է[20], սակայն մեր համոզմամբ, քրիստոնեական արվեստում տաճարիկն ունեցել է հստակ խորհրդաբանություն: Սյուների մաս կազմող տաճարիկ- մոդելները պետք է դիտարկենք նաև հայ արվեստի մյուս ճյուղերի համատեքստում՝ չմոռանալով որ մանրանկարչության մեջ այն խորհրդանշել է Երուսաղեմի տաճարը, իսկ ճարտարապետության մեջ,

---

17 **О. Халпахчьян**, *Санаин*, с. 26.

18 **Ստ. Մնացականյան**, *Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը IX-XIV դարերում*, Երևան, 1976, էջ 75:

19 *Մատենագիրք Հայոց, ԺԱ հատոր*, Անթիլիաս, 2010, էջ 291:

20 **Ա. Մնացականյան**, *նշվ. աշխ.*, էջ 413:

տեղ գտնելով եկեղեցիների արտաքին հարդարանքում, այն հիմնականում հանդիսացել է տվյալ եկեղեցու մանրակերտը:

Ընդհանրապես, փոքրիկ մոդելների օրինակներ կան համաշխարային արվեստում: Քրիստինա Մարանչին որպես օրինակ նշում է Արևմտյան Մեքսիկայից հայտնաբերված և տան տեսք ունեցող մոդել, որը պահվում է Նյու Յորքի Մետրոպոլիտան թանգարում ու թվագրում է մ.թ.ա. 100 - մ.թ. 200 թթ. (նկ. 8)[21]: Եկեղեցու մանրակերտի հանդիպում ենք նաև իտալական արվեստում: Նշանավոր ճարտարապետ Ֆիլիպպո Բրունելեսկին ստեղծել է Սանտա Մարիա դել Ֆիորե եկեղեցու մոդելը, որը պահվում է Ֆլորենցիայում: Այն պատրաստված է փայտից և թվագրվում է XV դարով (նկ. 9): Բյուզանդական արվեստում նույնպես հանդիպում ենք տաճարիկի օրինակների: Մասնավորապես, Սուրբ Սոֆիա եկեղեցու խճանկարում (նկ. 10)[22]: Այստեղ տիրամայրը մանկան հետ նստած է գահին: Մարիամի ձախ կողմում Կոնստանդին կայսրն է՝ իր ծիսական հագուստով, և Մարիամին է ներկայացնում Կոստանդնուպոլիս քաղաքի

Նկ. 9. Սանտա Մարիա դել Ֆիորե եկեղեցու մանրակերտ*

Նկ. 10. Խճանկար, Այա Սոֆիա տաճար**

[21] https://www.youtube.com/watch?v=8Oo9ZC9Xvoc&t=280s, 19.01.2020

* Լուսանկարը 25.10, 2019-ի դրությամբ, կից հղումով՝ https://www.pinterest.com/pin/152559506102967532

[22] Նույն տեղում:

** Լուսանկարը 19.01.2019-ի դրությամբ, կից հղումով՝ https://en.wikipedia.org/wiki/Hagia_Sophia#/media/File:Hagia_Sophia_Southwestern_entrance_mosaics_2.jpg

մոդելը, իսկ աջ կողմում կանգնած է Հուստինիանոս I կայսրը, որը նվիրաբերում է Սուրբ Սոֆիայի տաճարի մոդելը: Ինչ վերաբերում է մասունքները առանձին պահարաններում կամ քարե սարկոֆագներում պահելու երևույթին, ապա բյուզանդական արվեստից պահպանվել են օրինակներ: Դրանցից մեկը թվագրվում է 400-600 թթ.-ով և պահվում է Նյու Յորքի Մետրոպոլիտան թանգարանում (նկ. 11)[23]:

Նկ. 11. Սարկոֆագի տեսքով մասանց պահարան (բյուզանդական արվեստ, 400-600 թթ.)***

Մեր ներկայացրած այդ օրինակները ցույց են տալիս, որ տաճարիկները սովորաբար բնորոշ են ոչ միայն հայ արվեստին: Տաճարիկների օրինակներ կան և՛ բյուզանդական, և՛ իռլանդական արվեստներում (նկ 12)[24], դրանք բավական մանրակրկիտ ուսումնասիրման կարիք ունեն: Հայ արվեստում առկա տաճարիկ-մոդելները մեծ տարածում ունեն: Դրանք հիմնականում զարդարել են եկեղեցիների արտաքին տեսքը և ձեռագրերը: Կարծում ենք, որ տաճարիկները պետք է ուսումնասիրել ոչ թե առանձին, այլ համալիր: Հավանաբար, տաճարիկները հստակ խորհրդաբանություն ունեն՝ արվեստի տարբեր ճյուղերում պատկերվելիս: Այդ խորհրդաբանությունը զուգորդվել է գեղագիտական բնույթի հետ:



Նկ. 12. Իռլանդական թևավոր խաչ

Եղած պատմական նյութի և տաճարիկների օրինակների ուսումնասիրությունը, նրանցում եղած խորշերի առկայությունը, մետաղե դռնակների համար արված անցքերը, համաշխարհային արվեստում փոքրիկ մոդելների առկայությունը, բյուզանդական արվեստում մասունքների համար պահարան հանդիսացող սարկոֆագների գոյությունը որոշակի հիմք են

[23] https://www.metmuseum.org/art/collection/search/468311, 20.01.2020

*** Լուսանկարը 20.01.2019-ի դրությամբ, կից հղումով՝ https://www.metmuseum.org/art/collection/search/468311

[24] **H. Richardson**, **J. Scarry**, *An introduction to Irish high crosses*, Mercier press, 1990, p. 44.

տալիս կարծելու, որ առանձին տաճարիկ-մոդելները, խորհրդանշելով Երուսաղեմի Քրիստոսի գերեզմանի վրա կառուցված տաճարը, ծառայել են նաև որպես մասանց պահարաններ։

MONTE MATEVOSYAN

INDIVIDUAL TEMPLE MODELS AS RELIQUARIES

Keywords: Middle Ages, Armenian art, temple models, reliquaries, church, column.

Temple models have been widely used in medieval Armenian art. They mainly occur in ecclesiastical architecture and miniature painting. There also exist temple models used as decorations for upper parts of columns. They symbolize the Jerusalem Temple and may have served as reliquaries, which is corroborated by historical sources. This supposition is also confirmed by the existence of holes for metal doors on the temple models, as well as by the information that Christian rites were performed around such columns.

МОНТЕ МАТЕВОСЯН

ОТДЕЛЬНЫЕ МОДЕЛИ ХРАМОВ КАК РЕЛИКВАРИИ

Ключевые слова: Средневековье, армянское искусство, модель храма, реликварий, церковь, колонна.

Модели храмов имели большое распространение в средневековом армянском искусстве. Они в основном являлись частью церковной архитектуры, а также изображались в книжной миниатюре. Встречаются также модели храмов, украшающие верх колонны. Они символизируют Иерусалимский храм. Возможно, они служили реликвариями, что подтверждается данными исторических источников. Это предположение подкрепляется также тем фактом, что на моделях видны отверстия от металлической дверки, а также сведениями о проведении христианских церемоний вокруг некоторых колонн такого рода.